

Enrico Ferri: Die positive kriminalistische Schule in Italien. Deutsche Übersetzung von Röder, Frankfurt a. M. 1902.

(Ե. Ֆերրի. ՈՃՐՈՒԽՑԱԿԱՆ ԴՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԼ ԻՏԱԼԻԱՑՈՒՄ: Գերմ. թարգմ. Ռիոդերի, Գրանկֆուրտ Մ. գ. 1902.)

Անցեալ տարուայ սեպտեմբեր ամսին Պետերբուրգում *) զումարուեց ոճրագէտների կամ կրիմինալիստների միջազգային բազմամարդ կոնգրեսը, որին մասնակցում էին կուլտուրական գրեթէ բոլոր երկրներից հեղինակաւոր մասնագէտներ, կոնգրեսը բացուեց Ռուսաց արդարագատութեան մինիստրի մի ճառով, որով նա իր համակրութիւնը յայտնեց այն նոր ուղղութեան, որ սկսում է տիրապետող հոսանք ստեղծել ոճրագիտութեան մէջ:

Թէ առհասարակ ո՞րն է ոճրագիտական այդ նոր ուղղութիւնը, ինչ է խոկապէս նրա բովանդակութիւնը և ինչով է նա տարրերում իր նախորդ հին ուղղութիւնից, այդ հարցերի մասին մեզ մանրամասն, պարզ և որոշ տեղեկութիւններ է տալիս մեր մատենախօսութեան վերնագիրը կրող աշխատութիւնը, որ պատկանում է իտալացի յայտնի կրիմինալիստ Էնրիկո Ֆերրիի գրչին և որի գերմաներէն նոր լոյս տեսած թարգմանութիւնը մննը ի նկատի ունենք:

Եւրոպական գրեթէ բոլոր երկրներում ներկայումս գործածուղ պատժական օրէնսդրութիւնները իրանց ամբողջ էութեամբ հիմնուած են ոճրագիտական հին կամ կլասսիկական ուղղութեան հայեցողութեան և տեսութեան վրայ: Այդ շիռլան ծագել է իտալիայում 18-րդ դարու վերչերին զլաւարապէս իտալիացի յայտնի իրաւագէտ Բեկկարիայի չնորհիւ և մինչև 19-րդ դարու կէսը խոշոր ազգեցութիւն է թողիլ եւրոպական բոլոր երկրների պատժական իրաւունքի վրայ: Մի խօսքով ոճրագիտական հին կամ կլասսիկական գալուցը կազմում է ժամանակակից քաղաքակրթուած տէրութիւնների պատժական օրէնսդրութեան միակ ու զլաւոր հիմքը:

19-րդ դարու ընթացքում մարդկութիւը անտեսական, կուլտուրական և բարոյական խոշոր յառաջադիմութիւն անելով, միշտ շարք թերութիւններ նկատեց և՝ գոյութիւն ունեցող պատժական իրաւունքի մէջ: Իտալիայում ծնունդ առաւ ոճրագիտական մի նոր գալուց, որ յայտի է «ոճրագիտական նոր կամ դրական շիռլա» անունով: Ոճրագիտական կամ կրիմինալիստական գրական դպրոցի հիմնադիրը ամենայն իրաւամբ համարում է իտալացի աշխարհահռչակ գիտական Ցեղարէ Լոմբրոզոն:

*) Տես «Մուրճ» 1902 թ. № 10 ներք. տեսութ.

1872թ. Լոմբրոզօն մի բոլորովին նոր ճանապարհ հարթեց պատժական օրէնսդրութեան ուսումնասիրութեան հոմար: Նա իստալիայի տէրունական զանազան բանական գտնուած ոճրագործներին սկսեց մարդաբանական տեսակէտից ուսումնասիրել և այդ գիտնական ուսումնասիրութեան արդիւնքները ամփոփեց իր առաջին աշխատութեան մէջ, որի առաջին հրատարակութիւնը լոյս տեսաւ 1876թ. «L'uomo delinquente» վերնագրով: Այդ աշխատութեան առաջին տպագրութիւնը գիտնական աշխարհի կողմից ցանկալի ուշադրութեան չ'արժանացաւ, որովհետեւ Յ. Լոմբրոզօն իր ուսումնասիրութեան մէջ ներկայացրել էր միայն մերկ փաստեր և վիճակագրական տեղեկութիւններ, առանց ընդհանուր գիտնական եզրակացութիւններ անելու, որոնք միայն կարող էին ընդունակ լինել գիտնական, զլիսաւորապէս իրաւաբանական աշխարհի ուշադրութիւնը գրաւելու: Երկու տարի անցնելուց յետոյ լոյս տեսաւ Լոմբրոզօնի զիտնական գրուածքի երկրորդ, աւելի ճոխ և լուսաբանուած հրատարակութիւնը, որի հետ միաժամանակ լոյս տեսան և նրա երկու արժանաւոր հայրենակիցների՝ Ռաֆայէլ Գարոֆալի և Էնրիկօ Ֆերրիի ոճրագիտութեան վերաբերեալ աշխատութիւնները. վերջին երկու գրուածները ոչ այլ ինչ էին ներկայացնում, եթէ ոչ Լոմբրոզօնի հաջորդած փաստերի հիման վրայ կազմած ընդհանուր գիտնական եզրակացութիւնները; Առաջին նեղնակի աշխատութիւնը կրում է «Ոճրագործութիւն», խակ երկրոգինը «Կամքի աղաւատութեան բացասումն և պատասխանատութեան թէորիան» վերնագիրը: Վերոյիշեալ երեք գիտնական գործերը հարթեցին ոճրագիտական նորագոյն գոլոցի համար ճանապարհ, որը յետոյ գիտնական տեսակէտից ահազին նուածումներ արեց քաղաքակրթուած զրեթէ ամբողջ աշխարհում: Այժմ աշխատներ համառօտ կերպով ծանօթացներ, թէ ինչումն է կայանում ոճրագիտական այդ երկու գպրոցների կամ ուղղութիւնների տարբերութիւնը և ինչ է իւրաքանչիրի բովանդակութիւնը ըստ ի: Ֆերրիի նորագոյն աշխատութեան:

Կրիմինալիսա Ֆերրին հաստատում է, որ ոճրագիտական հին կամ կլասսիկական դպրոցը պաշտպանում է գետերմինիտական հայեցակէտն և ընդունում է մարդկային կամքի աղաւատութիւնը: Մնհատը ոճիր է գործել, որովհետեւ նա այդ ցանկացել է, ուրեմն և նա պարտաւոր է զրա համար իր արժանի պատիմը կրելու: Այն ինչ ոճրագիտական նոր կամ պողիտիւ (դրական) չկոլան պաշտպանում է ինդետերմինիտական հայեցակէտը և բացասում է մարդկային կամքի աղաւատութիւնը, ուրեմն և ոճրագործի բարոյական պատասխանատութիւնը: Բատ

վերջին ուղղութեան իւրաքանչիւր ոճրագործ իր լրջակայրի արդիւնքն ու ծնունդն է, իսկ այդ շրջավայրը որոշ չափով սահմանափակում կամ բոլորովին խանգարում է նրա կամքի ազատութիւնը: Դատաւորները բարոյապէս պարտական են աւելի մարդասիրական վերաբերմունք ցոյց տալ դէպի յանցագործի անձնաւորութիւնը և նրա գործած յանցանքի կամ ոճիրի արմատները որոնել հասարակական բացասական կարդերի մէջ: Ոճրագործին չը պէտք է պատժել նրա գործած մեղքի համար, որովհետև ոչ ոք ոչնչով մեղաւոր չէ, այլ միմիայն նրա համար, որպէս զի մարդկային հասարակութիւնը պաշտպանուած լինի վտանգաւոր արարածներից, և վերջապէս դատաւորը պէտք է գործ ունենայ ոչ թէ յանցանքի, այլ յանցաւորի հետ, ինչպէս որ թժիկը թժկում է ոչ թէ հիւանդութիւնը, այլ հիւանդին: Պատժական օրէնսդրութեան նպատակը պէտք է լինի կռւել և զինուել ոճրագործութեան դէմ, որ հասարակական մի բացասական երեսյթ է ներկայացնուած, իսկ դատաւորի պարտականութիւնը պէտք է լինի որոշել թէ իր հիւանդ ոճրագործը հիւանդութիւնների որ կատեղորհային է պատկանուած: Ե. Ֆերրին իր աշխատութեան մէջ տարբերում է երեք տեսակ գործօններ, որոնք ազդում են ոճրագործութեան որակի վրայ: Այդ գործօններն են. մարդաբանական, կլիմայական և սոցիալական:

Ինչ վերաբերում է մարդաբանական գործօնին, նա հիմնուած է ժառանգականութեան օրէնքի վրայ: Ինչպէս իւրաքանչիւր անհատ, այնպէս էլ ոճրագործը իր ծնուելու հետ միասին ժառանգում է մի շարք դրական և բացասական յատկութիւններ, որոնք նրա բնաւորութեան կազմակերպութեան համար ահազին դիր են կատարում և խոշոր ազդեցութիւն գործում ոճրագործի կատարած ոճիրի որակի վրայ: Դրա համար էլ շատ կարենը է ուսումնասիրել իւրաքանչիւր ոճրագործի անհատական հոգեբանութիւնը, հասկանալու համար՝ թէ ինչն է գրդել այդ մարդուն մի որեէ ոճիր գործելու: Ոճրագիտութեան մէջ մարդաբանական գործօնի ուսումնասիրութեան խոշոր նըշշակութեան վրայ առաջին անգամ մատնացոյց է արել և շեշտել 8. Լոմբրոզոն, որով նա դրա համար զրեթէ մի առանձին գիտութիւն է ստեղծել և մեծ հաշակի արժանացել:

Ոճրագործութեան մարդաբանական գործօնին է պատկանում և ցեղային կամ բասարական բնաւորութիւնը: Գիտութիւնն արդէն ապացուցել է, թէ ցեղական ազդեցութիւնը որքան զօրեղ է ազդերի և մարդկանց պատմութեան վրայ: Յայտնի է արդէն, որ իտալիա թերակղզու ազգաբնակութիւնը ըստ

իր բասայական յատկութիւնների երկու զլիաւոր մասերի է բաժանում: Սպաքարնակութեան այն մասը, որ ապրում է իտավայի հարաւային մասում, համեմատաբար աւելի մաքուր է պահպանել իր ցեղային՝ բասայական յատկութիւնները, քան թէ հիւսիսային մասում ապրող իտալայինները, որոնք իրանց պատմական կեանքի ընթացքում աւելի յաճախ և շատ են խառնուել օտար տարրերի՝ ժողովրդների հետ: Դրա համար ինչպէս լոմբրոզոն, այնպէս էլ է. Ֆերրին բնդւնում են ոճրագործութիւնների երկու զլիաւոր և միմիանցից բաւական տարրեր հոսանքներ իտալիայի հիւսիսային և հարաւային մասերի ազգաբնակութեան համար խիստ բնորոշող: Օր, իտալիայի հարաւային մասում մարմիններ վիրաւորելու դէպքերը աւելի սաստիկ են դարդացած և մարդասպանութիւններ աւելի յաճախ են տեղի ունենում, քան թէ հիւսիսային մասում, որտեղ տեղ չատ են պատահում այն տեսակ ոճրագործութիւնները, որոնց նպատակն է ուրիշի սեպհականութեանը բռնի կերպով տիրանալ, լինի դա գողանալով կամ աւելի թեթև ոճիրներ դորձելով, ուրիշ խօսքով իտալիայի հիւսիսային մասում կեանքի դէմ կատարուած ոճրագործութիւնները աւելի սակաւ են պատահում:

Երկրորդ գործօնը կլիմայականն է, որ նեարդերի միջոցով մեծ ազգեցութիւն է գործում մարդուս մտաւոր գործողութիւնների վրայ: Վաղուց արդէն յայանի է, թէ եղանակը և ընդհանրապէս կլիմայական պայմանները ինչպիսի խոշոր ազգեցութիւն են գործում ինչպէս անհատի, այնպէս էլ ոճրագործի արածադրութեան վրայ: Է. Ֆերրին և դեռ նրանից առաջ մի քանի ուրիշ ոճրագէտներ վիճակագրական տեղեկութիւններով հաստատել են, որ տարուայ եղանակների փոփոխութիւնը մեծ ազգեցութիւնը է գործում ոճրագործութիւնների որակի վրայ և բնորոշում է նրանց: Օր, գարնանը և ամառը տեղի ունեցած ոճրագործութիւնների ամենամեծ տոկոսը բարոյականութեան դէմ է ուղղուած լինում, քան թէ ձմեռը, երբ ոճրագործութիւնները մարդկային սեպհականութիւնների դէմ են պատահում:

Է. Ֆերրին իր նախորդ Յ. Լոմբրոզօի նման բոլոր ոճրագործներին բաժանում է օ կատեգորիաների, որոնք են. բնածին-խելագար, սովորած, պատահական և կրքոտ կամ իմպուլսի ոճրագործներ:

Ոճրագիտական երկու միմիանցից տարբեր դպրոցները զանազան տեսակ են վերաբերուում դէպի վերոյիշեալ կատեգորիաներին պատկանող ոճրագործները: Հին կամ կլասսիկական

դպրոցը բոլոր ոճրագործներին պատժով է վարձատրում, այն ինչ ոճրագիտական նորագոյն գրական շկոլան իր գլխաւոր ուշագըրութիւնը դարձնում է սոցիալական առողջապահութեան վրայ; Ֆերրիի կարծիքով սոցիալական կեանքում պատիժը ոճրագործութեան վերաբերմաբ ճիշտ այն դերը պէտք է կատարի, ինչ որ բժշկական զիտութիւնը մարդկային հիւանդութեան վերաբերմաբ: Հին կամ կլասսիկական դպրոցը նման է այն բժշկին, որ հիւանդին դեղեր է տալիս այն ժամանակի, երբ արդէն որոշուել և հաստատուել է նրա հիւանդութիւնը, այն ինչ ոճրագիտական և նորագոյն ուղղութիւնը աշխատում է այնպիսի միջոցների դիմել, որ ոչ մի հիւանդութիւն չը ծնուի, ուրիշ խօսքով նա նման է այն բժշկին, որ վաղօրօք է աշխատում հիւանդութեան երեան գալու առաջն առնել:

Բայց դրանից ոճրագիտական հին և նոր ուղղութիւնները միմիանցից զանազանում են և պատժի նպատակի տարրերը բրանողութեամբ: Ոճրագիտական կլասսիկ դպրոցը պատժի համար ընդունում է մի ընդհանուր միջոց՝ բանաւ երբ մի անհատ որևէ ոճիր է գործել, նրա համար դատաւորը որոշում է բանտարկութիւն ենթագրենք երկու տարի ժամանակով: Չը նայելով որ ոճրագործը կարող է իր բանտարկութեան ժամանակամիջոցի լրանալուց առաջ ուղղուել և իրան շրջապատող հասարակութեան համար անվանն մարդ դառնալ, բայց այնուամենայնիւ կլասսիկական դպրոցին պատկանող դատաւորը այդ հանգամանքի վրայ բոլովին ուշագրութիւն չէ դարձնում, ասելով, որ ոճրագործը բանտառմ պէտք է մնայ ճիշտ երկու տարի: Բայց կարող է և պատահել, որ ոճրագործը բանտառմ երկու տարի մնալուց յետով էլ ցանկալի կերպով չ'ուղղուի և սոցիալական կեանքի համար անպէտք մնայ, դրա վրայ էլ վերոցիչեալ դատաւորը ուշագրութիւն չէ դարձնում, ասելով, որ, իր համար այդ միենոյնն է, և ոճրագործն իր պարագը վճարել է այն ժամանակի, երբ լրացել է նրա բանտարկութեան ժամանակամիջոցը: Այն ինչ ոճրագիտական նորագոյն դրական դպրոցը բոլոր ոճրագործների համար չէ ընդունում մի ընդհանուր պատիժ, այլ վերջինս ցանկանում է անհատականացնել: Օր, պատահական և կրքոտ ոճրագործների համար նա առաջարկում է այնպիսի պատիժ, որ ընդունակ է վեասուած մարդկանց մի կերպ վարձատրել, իսկ միւս կատեղորիաներին պատկանող ոճրագործների համար ֆերրին առաջարկում է նրանց անորոշ ժամանակով չէղոքացնել և նպատակայարմար կերպով տեղաւորել մի այնպիսի հիմնարկութեան մէջ միայն այն ժամանակի, երբ նրանք սոցիալական տեսակէտից կը բժշկուեն և նորից ընդունակ կը

գառնան հասարակութեան մէջ նորմալ կեանք անցկացնելու; Ֆերրիի կարծիքով բանտարկութիւնն որոշ ոճրագործների վըրայ շատ անգամ աւելի բացասական և ապահանիչ ազդեցութիւն է թողնում, քան ընդհակառակը: Ամենածանր ոճրագործներին չէղոքացնելու ժամանակ Ֆերրին առաջարկում է գիտնական առաջնորդութիւնն որանց ուղղելու համար, ինչպէս որ վարում են հոգեկան հիւանդների հետ զանազան գժատներում, որովհետեւ ոճրագիտական վիճակագրութիւնը արդէն հաստատել է, որ գրեթէ բոլոր ծանր ոճրագործների վարժունքի գիտաւոր պատճառը նրանց պատալողիական—աննորմալ դրութիւնն է: Ոճրագիտական-մարդաբանական դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչ Յ. Լոմբրոզոն էլ ընդունում է, որ հարիւր ոճրագործներից մօտ 35-ը բնածին ոճրագործներ են, այսինքն իրանցից ներկայացնում են այնպիսի հիւանդուն և աննորմալ արարածներ, որոնք նորմալ մարդկանցից զանազանում են իրանց անատոմիական (մարդկակազմական) տարբեր ֆունկցիաներով և ֆիզիքական ու մասաւոր տարբեր գործունէութեամբ: Սրանից պարզ երեսում է, որ ոճրագիտական նորագոյն ուղղութեան պատկանողները պաշտանում են այն գլխաւոր միջոցը, որի նորհիւ միայն կարելի է ոճրագործութեան առաջն առնել և նրան ըստ կարելոյն արմատափել անել: Ծովային աւազակութիւնը միջին դարերում շատ արածուած մի ընդհանուր ու սովորակար երեսից էր, և սոցիալական այդ չարիքի առաջն առան ոչ թէ այն ժամանակ սահմանուած սարսափելի պատիժներն ու գրակոնեան օրէնքները, այլ նաւազնացութիւնը, երբ վերջինս սկսեց հետզհետէ ծաղկել և կատարելագործուելու եւ յիրաւի ոճրագիտական նորագոյն դպրոցը բանական, ազատամիտ և առաջարէմ մի ուղղութիւն է ներկայացնում, որ ոճրագործութիւնը համարում է իրուն հասարակական մի երեսից, աշխատում է որոշել նրա բազմազան պատճառները, առողջ քննազատութեան է ենթարկում կուլտուրական զանազան երկրների պատժական օրէնողըրութիւնների մէջ ընդունուած անհիմն և աննպատակայարմարձեականութիւնները և վերջապէս որոշում է պատժական միջոցների բնաւորութիւնն ու աղքեցութիւնը: Այդ շկոլան է միայն ցոյց տալիս, որ օրէնսդիրների գլխաւոր նպատակը պէտք է լինի այնպիսի միջոցների դիմել, որոնք ընդունակ են ոճրագործութեան երեան դալու առաջն առնել և միայն ծայրացել դէպքերում դիմել պատիժների գործադրութեան: Բացի զբանից վիրոյիշեալ զպրոցը պահանջում է, որ իրաւաբանները մանրազնին ուսումնասիրութեան ենթարկեն ոճրագործների

հոգեկան դրութիւնը, որպէսզի կարելի լինի համոզուեն, թէ այդ ոճրագործները յիրաւի արժանի են իրանց անուան, թէ միայն հիւանդ արարածներ են, արդեօք նրանց տեղերը բանտերը, թէ ուղղիչ ապաստարաններ են, Կարծում ենք այսքանը բաւական է ոճրագիտական երկու ուղղութիւնների կամ՝ գլորոցների միմիանց վերաբերմամբ ունեցած տարբերութիւնը ցոյց տալու համար, Բայց կարեւոր ենք համարում այստեղ աւելացնել և այն, որ մի քանի կրիմինալիստների կարծիքով էլ վերոշնեալ երկու շկոլաների մէջ սկզբունքի ոչ մի տարբերութիւն գոյութիւն չ'ունի, այլ ընդհակառակը ոճրագիտական նոր կամ մարդաբանական դպրոցը ղեկավարում է հին շկոլայի աւանդութիւններով և առաջ է ընթանում նրա ընդգծած ճանապարհով Վերոյիշեալ կրիմինալիստները կարծում են, որ կլասսիկական կամ հին շկոլային պատկանող ոճրագիտներն էլ հետեւ են կեանքին, օգտուել են գատաստանական բժշկութիւնից և սրբխիատրիայի ու ոճրագործական վիճակագրութեան (Kriminalstatistik) ցուցումներից և այլն:

Հետեապէս, նրանց կարծիքով, գոյութիւն ունի միայն մի շկոլա, այն է ոճրագիտութիւնը, որ հետզհետէ առաջիրիմիլով և օգտուելով իր օժանդակ մի քանի գիտութիւններից, պատժի վրայ նայում է իրեն մի միջոցի, որի նպատակն է դիմադրել ոճրագործութեան, և այդ միջոցի մէջ են մտնում և նախազգուշական ու կրթական նկատումները:

Այդ օժանդակ գիտութիւններից, որոնք ոճրագիտութեանը խոչոր ծառայութիւն են մատուցել, աչքի ընկնողները հետեւանական են, ոճրագիտական սոցիոլոգիա (kriminal-sociologie), ոճրագիտական մարդաբանութիւն (kriminalantropologie), և պահիսաւարիա (psychiatrie):

Մի բանում միայն ոճրագիտութեան երկու ուղղութիւնների խոչոր ներկայացուցիչներն էլ սկզբունքով համաձայն են, այդ այն է, որ ներկայ տէրութիւնների պատժական օրէնսդրութեան մէջ ժամանակի պահանջների համեմատ պէտք է բեփորմներ մտցնել: Այդ հանգամանքի վրայ մատնացոյց արեց նորերս և Լայցպիգի համալսարանի նորընտիր ըեկառոր պրոֆ. Դ-ր Վախի իր բեկտորական ճառով, որի նիւթը կազմում էր ոճրագիտական երկու դպրոցների քննադատութիւնը, կլասսիկ ուղղութեան պատկանող յայտնի իրաւագէտ Վախը նոյնպէս պաշտպանում է այն միտքը, որ առհասարակ բոլոր տէրութիւնները պէտք է որոշ փոփոխութեան ենթարկեն իրանց պատժական օրէնսդրութիւնները: Բայց փոփոխութիւն ասելով նա չէ հասկանում այն արմատական կերպարանափոխութիւնը, ինչպէս

որ պահանջում են ոճրագիտական նոր կամ պողիափառ դպրոցի ներկայացուցիչները, այլ ցանկանում է պատժական օրէնսդրութեան աւելի մեղմ և չափաւոր մշակումն:

Նա անժամանակ է համարում պողիափառիստ կրիմինալիստների այն ցանկութիւնը, երբ նրանք աշխատում են պատժական օրէնսդրութեան հիմունքները արմատական փոփոխութեան ննթարկել, բայց միենոյն ժամանակ ընդունում է, որ իւրաքանչիւր տէրութեան պատժական օրէնսդրութեան մէջ պէտք է շեշտուած լինի արդարութեան և նպատակայարձարութեան գաղափարը և բոլորովին մաքրուած լինի վասակար ձեականութիւններից, Այդօրինակ ձեականութիւնների տակ վերոյիշեալ զիտնականը հասկանում է տառի յազմութիւնը ոգու վերաբերամբ, խօսքինը՝ նպատակի, ձեինը՝ իսկական կենսական արժէքի եայն: Վախի կարծիքով անտանելի է այն բանը, երբ պատժում է մէկը, որ իսկապէս մեղաւոր չէ կամ երբ մէկին պատժական օրէնսդրութեան ձեական որևէ յօդուածը աւելորդ և զուր տեղը պատիժ է սպառնում: Նա փաստերով մատնացոյց է անում գերմանական օրէնսդրութեան մէջ գոյութիւն ունեցող մի շարք ձեական յօդուածների վրայ, որոնք դատաւորների համար արգելվ են հանդիսանում ոճրագործների յանցանքի և պատժի համեմատական կամ համապատասխան չափը գտնելու: Պրոֆ. Վախի կարծիքով պատժական օրէնսդրութեան մեղմ կամ չափաւոր մշակումը ոչ թէ նոր հորիզոններ, այլ նոր հեռանը՝ կարներ է բաց անում, որոնց գլխաւոր նպատակը մարդկութեան երջանկութիւնն է: Նա թէն ընդունում է, որ առհասարակ գժուար է պատժական օրէնսդրութիւնը ամենակատարեալ կերպով մշակել բայց հեշտ է համարում այդ օրէնսդրութեան մէջ արդէն անպէտք ճանաչուած յօդուածները լաւ յօդուածներով փոխարինել և որքան կարելի է չը մոռանալ ու բարձր պահել մարդասիրութեան, մեղմութեան, դաստիարակութեան և փրկութեան սկզբունքը:

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ